

# ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



## ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

## ՁԵՌՆԱՐԿ

ԳՈՐԻՍ – 2021

ԳՊՀ «Որակի ապահովման ձեռնարկ»-ը ուսանողների համար նախատեսված կոլեկտիվ աշխատանքի արդյունք է, որը մշակվել է ԳՊՀ-ի ԿՈԱ և ՈՒԿԱ բաժնի աշխատակիցների կողմից:

Ձեռնարկը հաստատվել է Գորիսի պետական համալսարանի 27 մայիսի 2021թ. գիտական խորհրդի նիստում:

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱԲԱՆ**-----5

### **ԳԼՈՒԽ 1**

#### **ԳՊՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

1.1 ԳՊՀ որակի ներքին ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը----- 10

1.2 ԳՊՀ որակի ներքին ապահովման համակարգի սկզբունքները, նպատակներն ու խնդիրները-----19

1.3 ԳՊՀ որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավման սկզբունքները-----21

1.4 ԳՊՀ որակի ապահովման համակարգի փաստաթղթավորումը-----22

1.5 ԳՊՀ որակի ապահովման հիմնական գործընթացները-----25

### **ԳԼՈՒԽ 2**

#### **ԳՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

2.1 ԳՊՀ որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը-----	29
2.2 Ուսումնառության գնահատում-----	30
2.3 ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումը, խրախուսումը, վերապատրաստման և որակավորման բարձրացումը-----	40

### **ԳԼՈՒԽ 3**

#### **ԳՊՀ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

3.1 ԳՊՀ հետադարձ կապի քաղաքականություն-----	46
3.2 Հետադարձ կապի ապահովման կառուցակարգեր-----	48
3.3 Հասարակական պատասխանատվությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը՝ որակի ապահովման համակարգում-----	49
3.4 Ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականությունը որակի ապահովման գործընթացներում---	51
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ-----</b>	<b>57</b>

## ՆԱԽԱԲԱՆ

Վերջին տարիներին բարձրագույն կրթությունը թե՛ Եվրոպայում, թե՛ ողջ աշխարհում ենթարկվել է որոշակի հիմնարար փոփոխությունների՝ հաղթահարելով բազմաթիվ մարտահրավերներ, ինչպիսիք են գլոբալիզացիան, միջազգայնացումը, համավարակը, իսկ Հայաստանում նաև՝ պատերազմը:

Կրթության ոլորտի փոփոխություններից հետ չմնալու, արդյունավետ կրթական գործընթաց կազմակերպելու և արագ կողմնորոշվելու, բոլոր շահառուների կարիքների վերհանման նպատակով բարձրագույն կրթության միասնական հարթակի ստեղծման անհրաժեշտություն առաջացավ, որի ձևավորումը ոլորտի կազմակերպություններից երկար տարիներ պահանջեց:

1999 թվականին Եվրոպական 29 երկրների կրթության նախարարները հանդիպեցին Բոլոնիայում և ստորագրեցին մի հռչակագիր, որի նպատակն էր՝ մինչև 2010 թվականը ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) և նպաստել Եվրոպական բարձրագույն կրթության գրավչությանն ու մրցունակությանը ողջ աշխարհում:

Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականի մայիսի 19-ին ընդունած հռչակագրի համաձայն, նախկին կրթական համակարգից անցում կատարեց Բոլոնյան համակարգին: Բոլոնյան գործընթացին այսօր արդեն անդամակցում է շուրջ 49 երկիր: Բոլոնիայի Հռչակագիրը Եվրոպայի բարձրագույն կրթության հաստատությունների համար սահմանում է մի

շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից կարևորագույններն են՝ թափանցիկությունը և համադրելիությունը, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի շարժունությունը:

Հայաստանում «կրթության որակ» հասկացության և որակի հավաստման նոր համակարգի ձևավորման քննարկումները 2000 թվականից սկսվել են Եվրախորհրդի «Որակի հավաստման իրավական շրջանակը Հարավային Կովկասի երկրներում. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան» ծրագրից: Նշված ծրագրի շրջանակում մշակված ազգային զեկույցներում և երեք երկրների կրթության նախարարների համատեղ հոչակագրերում շեշտվում էր որակի հավաստման նոր համակարգի ձևավորման անհրաժեշտությունը, բուհերի կառավարման ժողովրդավարացումը (ժողովրդավարական սկզբունքների ներդրումը), ակադեմիական ազատությունները և ուսանողների մասնակցությունը որակի հավաստման գործընթացներին:

Գործիսի պետական համալսարանը ներգրավվել է Բոլոնիայի գործընթացում և ձգտում է հետ չմնալ հայաստանյան և եվրոպական նմանատիպ համալսարաններից ինչպես կազմակերպման, այնպես էլ որակի չափանիշների առումով:

ԳՊՀ-ի կայուն զարգացման ապահովման երաշխիքներից է 2019-2023 թթ.-ի Ռազմավարական զարգացման ծրագիրը:

2019 թվականին ԳՊՀ խորհուրդը հաստատեց համալսարանի 2019-2023թթ. ռազմավարական ծրագիրը, որում հստակեցվեցին բուհի ռազմավարական ուղղություններն ու գերակայությունները:

Համալսարանի նոր ռազմավարությունը մշակվել է ինստիտուցիանալ ինքնավերլուծության 10 չափանիշներին համահունչ, այսինքն՝ հաշվի են առնվել փորձագիտական զեկույցում մատնանշված թերությունների վերացման առաջնահերթությունները, որոնք էլ սահմանվել են որպես համալսարանի առաջանցիկ զարգացման խնդիրներ՝ կառավարման տարբեր օղակներում:

Ռազմավարական ծրագրի հաստատումից հետո ձևավորվել է ռազմավարության հարցերով զբաղվող հանձնաժողով՝ ռազմավարության ամբողջ առաջընթացը մշտադիտարկելու, խոչընդոտների մասին տեղեկացնելու, դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու, խնդիրների վերանայման առաջարկություններ կատարելու համար:

Բուհի նոր ռազմավարությունը շատ ավելի իրատեսական է և կիրթանի բուհի առաջընթացը: Նպատակները մշակվել են ներքին շահակիցների տարբեր խմբերի հետ համատեղ՝ ամրապնդելու նոր ռազմավարության նկատմամբ ողջ ակադեմիական համայնքի սեփականության զգացումը: Հետևապես, այդ ողջ գործընթացը պետք է առավել շատ խրախուսման և ավելի շատ ջանքերի գործադրման հանգեցնի՝ խթանելով բուհի զարգացումն այս դժվարին ժամանակահատվածում:

Սահմանված ռազմավարական նպատակներն արդյունավետ իրականացնելու համար ԳՊՀ-ում կատարվել են բարեփոխումներ, կառուցվածքային փոփոխություններ, վերանայվել, հաստատվել և կիրառվում են մի շարք նոր փաստաթղթեր՝ միտված բուհի կառավարման համակարգի,

ինչպես նաև ուսումնագիտական գործընթացի բարելավմանը: Նախագծային քննարկումներ են ընթանում նոր իրավական փաստաթղթերի շուրջ, վերանայվում և լրամշակվում են բազմաթիվ կանոնակարգեր ու ընթացակարգեր: Բուհի ներքին իրավական դաշտի կարգավորումը շարունակական գործընթաց է:

ԳՊՀ-ն շարունակում է քայլեր իրականացնել՝ դիմակայելու ներկա ժամանակաշրջանում բուհի համար ոչ շահեկան մի շարք գործոնների ազդեցությանը, որոնց թվում են՝ ուսանողների թվաքանակի ու ֆինանսական ռեսուրսների նվազումը, աշխատակազմի թույլ մոտիվացիան՝ պայմանավորված սոցիալական իրադրությամբ, երիտասարդ մասնագետների գիտական գործունեության ոչ գրավիչ դիրքը և այլն:

Այսօր ԳՊՀ-ի գործունեությունը միտված է ժամանակակից կրթական բարեփոխումների ոգով կրթության կազմակերպմանը՝ իրականացնելով մատուցվող ծառայությունների շարունակական բարելավում:

Արդիականության պահանջներից բխող որակի ապահովումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է բուհի հիմնական գործառույթը:

Վերջին տարիներին բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականության համատեքստում գերակա է ուսանողների դերն ու նշանակությունը: Այսօր նրանք առավել քան երբևէ ներգրավված են ուսումնական գործընթացի բարելավման ու կայացման գործընթացում: Ուսանող լինելով հանդերձ՝ նրանք ստանձնում են ոչ միայն գրված, այլև դեռևս չամրագրված պարտականություններ, քանզի հասարակությունն առողջացնող



այն ուժն են, այն շերտը, որը, չնայած, սակավ կենսափորձին, դառնում է առողջ հասարակության ստեղծման թերևս ամենակարևոր խթանը: Ուսանողների ձայնն այսօր հստակ լսելի է, քանի որ նրանք առաջադիր խնդիրներին վերաբերվում են իրատեսորեն:

Միբելի՝ ուսանողներ, կրթական համակարգում ձեր՝ կրթական գործընթացի շահակիցներիդ ակտիվ գործունեությամբ են միայն պայմանավորված ուսումնական գործընթացի հաջողությունները, ուստի համոզված եմ, որ այսուհետև ևս դուք կանեք հնարավորը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետներ դառնալու համար:

ԱՐՏՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ  
ԳՊՀ ՌԵԿՏՈՐ

# ԳԼՈՒԽ 1

## ԳՊՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

### *1.1 ԳՊՀ Որակի ներքին ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը*

ԳՊՀ կրթության որակի վրա ազդող հիմնական գործոնները.

ԳՊՀ-ի կողմից կառավարման կարիք ունեցող կրթության վրա ազդող հիմնական գործոններն են՝

- Կրթական ծրագրերը և դրանց իրականացման որակը.

- ✓ Կրթական ծրագրերի չափորոշիչները և մասնագիտության որակավորման բնութագրիչները
- ✓ Ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը
- ✓ Ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները
- ✓ Ուսանողական համակարգի որակական բնութագրերը
- ✓ Ուսումնական գործընթացի կազմակերպումը և կառավարումը

-Դասախոսական կազմի որակը.

- ✓ Դասախոսական կազմի որակավորման մակարդակը
- ✓ Դասավանդման հմտությունները

-Ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները.

- ✓ Ուսումնական և մեթոդական գրականությունը
- ✓ Տեղեկատվական ռեսուրսները և տեխնոլոգիաները
- ✓ Ուսումնառության աջակցման ծառայությունները

-Կրթական ծրագրերի կապն աշխատաշուկայի և գործատուների հետ.

- ✓ Ծրագրի (մասնագիտության) և համապատասխան որակավորման պահանջվածությունը տեղական և միջազգային աշխատաշուկայում
- ✓ Պոտենցիալ գործատուների ներգրավվածությունը ծրագրի նախնական մշակման և/կամ իրականացման գործընթացներում

-Որակի ներքին ապահովման համակարգը և կիրառվող մեխանիզմները

- ✓ Որակի ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը
- ✓ Որակի գնահատման և ապահովման ընթացակարգերը

-Որակի ներբուհական գնահատման հիմնական օբյեկտները.

- ✓ Կրթական ծրագրերը և դրանց առանձին բաղադրիչները
- ✓ Ուսանողների ձեռք բերած կրթական վերջնարդյունքները
- ✓ Պրոֆեսորադասախոսական կազմի որակը
- ✓ Դասավանդման, ուսումնառության և գնահատման որակը
- ✓ Ուսումնառության ռեսուրսները և ուսանողական օժանդակ ծառայությունները
- ✓ Տեղեկատվության ներքին և արտաքին համակարգերը
- ✓ Որակի ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետությունը

ԳՊՀ որակի ապահովման համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և պատասխանատվությունների բաշխումը նրանց միջև .

**ԳՊՀ գիտական խորհուրդը** հաստատում է որակի ապահովման քաղաքականությունը, որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը, ԳՊՀ տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջարկում բարելավման միջոցառումներ, հրապարակման է երաշխավորում ԳՊՀ որակի ապահովման ձեռնարկը:

**ԳՊՀ ռեկտորը** համակարգում, ապահովում և վերահսկում է կրթության որակի ներքին ապահովումը

- ✓ Ապահովում է ներդաշնակ համագործակցություն կրթության որակի ապահովման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների միջև
- ✓ Կառավարում է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը:

**ԳՊՀ պրոռեկտորն** ապահովում է իր ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ և այլն) որակի ապահովման գործընթացներին ներգրավվածությունը, ներդաշնակ փոխգործակցությունը:

**ԳՊՀ Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժինը՝**

- ✓ Իրականացնում է բարեփոխումներ՝ ՀՀ կրթական համակարգի արդի պահանջներին համապատասխան
- ✓ Մշակում, կազմակերպում և վերահսկում է կրթության որակի ապահովման մեխանիզմները

- ✓ Կազմակերպում է Որակի ապահովման և բարելավման նպատակով սեմինարներ, խորհրդակցություններ, համաժողովներ.
- ✓ Մշակում և կազմակերպում է մշտադիտարկումներ՝ մասնագիտական որակավորումների բարձրացման և վերապատրաստման համար
- ✓ Նպաստում է կրթական համակարգում ընդգրկված մասնագիտական ներուժի որակավորումների բարձրացման և վերապատրաստման ծրագրերի մշակմանը
- ✓ Կազմակերպում է ուսանողների խորհրդատվություն
- ✓ Վերլուծում է Գորիսի պետական համալսարանի ֆակուլտետների, ամբիոնների և այլ ստորաբաժանումների կողմից իրականացվող և Բաժնի խնդիրներին առնչվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը
- ✓ Համակարգում, կազմակերպում և ամփոփում է համալսարանի ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ համալսարանում տարվող աշխատանքները
- ✓ Կազմակերպում է համալսարանի ուսանողների մոտ ուսումնառության հետ զուգահեռ աշխատանքային որոշակի փորձի ձևավորման ուղղությամբ աշխատանքները
- ✓ Ապահովում է Համալսարանի ուսանողների, շրջանավարտների և պոստենցիալ գործատուների միջև արդյունավետ կապ
- ✓ Կազմակերպում է սեմինարներ, կլոր սեղաններ, կոնֆերանսներ, գիտաժողովներ, նպատակային և

լրացուցիչ պատրաստման ու վերապատրաստման դասընթացներ, աշխատաշուկայում արդի պահանջների և աշխատանքի որոնման տեխնոլոգիաների ու հմտությունների, մասնագիտական կողմնորոշման և ուրիշ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական ու այլ միջոցառումների համապատասխան դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցություն

- ✓ Տրամադրում է շահառուներին տարբեր հայտարարությունների և մրցույթների մասին տեղեկատվություն
- ✓ Կազմակերպում է տարբեր ցուցահանդեսներ (մասնավորապես՝ «Աշխատանքի տոնավաճառ», «Կարիերայի օր» և այլն), գործատուների հետ հանդիպումներ, կազմակերպությունների ներկայացումներ (շնորհանդեսներ), ձեռնարկություններում էքսկուրսիաներ, փոխայցելություններ և այլ միջոցառումներ
- ✓ Կնքում է համաձայնագրեր և հուշագրեր պոտենցիալ գործատուների, տարբեր կազմակերպությունների հետ, ապահովում է դրանց իրականացումը:

### **Որակի ապահովման ներքին աուդիտի հանձնաժողովը**

- ✓ Մշտադիտարկում է ուսանողների ընդհանուր կրթության մակարդակը
- ✓ Հավաքագրում, մշակում, պահպանում և կիրառում է բուհում տարբեր մասնագիտություններից ուսանողների

կրթական պատրաստվածության որակի վերաբերյալ տեղեկատվությունը

- ✓ Մշակում է առաջարկությունների փաթեթներ բուհի տարբեր ենթակառույցների գործունեության վերաբերյալ՝ տարբեր մասնագիտությունների գծով կրթական ծրագրերի յուրացման և որակի գնահատման նպատակով
- ✓ Մասնակցում է ներբուհական կրթության որակի բարձրացման նպատակով բուհի պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշային գնահատման և որակավորման բարձրացման աշխատանքներին
- ✓ Տրամադրում է Բուհի ենթակառույցների ղեկավարությանը ներբուհական կրթության որակի կառավարման համակարգի վերաբերյալ խորհրդատվություն

#### **ԳՊՀ ֆակուլտետները**

- ✓ Պատասխանատու են ֆակուլտետի մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար
- ✓ Կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման, իրականացման ընթացիկ մոնիթորինգի ու պարբերական վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- ✓ Ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, ուսումնական գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակության այլ միջոցներ կրթական ծրագրերի

հաջող իրականացման համար՝ ծրագրերի պահանջներին համապատասխան,

- ✓ Կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի ինքնագնահատումը և համապատասխան զեկույցի կազմումը՝ ծրագրերի տարեկան մոնիթորինգի, պարբերական վերանայման և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում:

### **Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուները**

- ✓ Վերահսկում են ֆակուլտետի ՄԿԾ-ների պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը
- ✓ Վերահսկում են ՄԿԾ-ների պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը
- ✓ Պատասխանատու է ֆակուլտետում ՄԿԾ-ների որակի ապահովման և ներքին վերահսկման համար
- ✓ Պատասխանատու է համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար

### **Որակի ապահովման ուսանող-գործակալները**

- ✓ Ընդգրկվում են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին, ապա նաև շրջանավարտների՝ համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության հարցումներին
- ✓ Մասնակցում են Համալսարանի ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացներին



- ✓ Մասնակցում են ֆակուլտետի ինքնագնահատման, ինքնավերլուծության գործընթացներին
- ✓ Նպաստում են որակի մշակույթի տարածմանը ֆակուլտետում

### **ԳՊՀ ամբիոններ**

- ✓ Կազմակերպում են կրթական ծրագրերի մշակման, իրականացման ընթացիկ մոնիթորինգի, պարբերաբար վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան
- ✓ Ապահովում են բարձր որակավորում ունեցող մասնագետներ՝ կրթական ծրագրերի հաջող իրականացման համար
- ✓ Գնահատում են պրոֆեսորադասախոսական կազմի և դասընթացների որակը դասալսումների միջոցով այդ թվում՝ դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդները

### **Արտաքին գնահատողները (փորձագետներ, շրջանավարտներ, գործատուներ)**

- ✓ Կատարում են համալսարանի գործունեության, որակի ներքին ապահովման համակարգի և կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն՝ ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման գործընթացների,
- ✓ Ընդգրկված են շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (ավարտական ամփոփիչ

քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության) հանձնաժողովներում

- ✓ ԳՊՀ նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին
- ✓ Մասնակցում են ԳՊՀ-ում իրենց ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներին
- ✓ Մասնակցում են ԳՊՀ շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներին

**Հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման նպատակով ըստ 10 չափանիշների որակի աշխատանքային խումբ**

✓ Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացի իրականացման մասնակցություն

✓ Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացի շրջանակներում տեղեկատվության հավաքագրում, համադրում և վերլուծություն,

- ✓ Ինքնավերլուծության զեկույցի պատրաստում
- ✓ Թերությունների շտկման ծրագրի մշակում

## ***1.2 ԳՊՀ որակի ներքին ապահովման համակարգի սկզբունքները, նպատակներն ու խնդիրները***

ԳՊՀ որակի ներքին ապահովման համակարգի կառուցումն ուղղորդվում է Եվրոպական չափորոշիչներում և ուղենիշերում ձևակերպված հետևյալ հիմնարար **սկզբունքներով**.

- ✓ Կրթության որակի ապահովման համար ԳՊՀ-ն կրում է առաջնային պատասխանատվություն
- ✓ Կրթության որակի ապահովման համար ԳՊՀ-ն հաշվետու է իր ուսանողներին, գործատուներին և հիմնադիրներին
- ✓ ԳՊՀ-ն պետք է կարողանա հավաստել իր տրամադրած կրթության որակն ազգային և միջազգային հարթություններում
- ✓ ԳՊՀ-ն կրթական ծրագրերի որակը շարունակաբար բարելավվում է՝ ուսանողների և այլ շահակիցների սպասելիքներին համապատասխան:

Այս սկզբունքների իրականացմամբ սահմանվում են ԳՊՀ որակի ներքին ապահովման համակարգի հետևյալ հիմնական **նպատակները՝**

- ✓ Պահպանել ԳՊՀ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համար սահմանված կրթական չափորոշիչները
- ✓ Ապահովել կրթության որակի համար ԳՊՀ-ի հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների հանդեպ

- ✓ Ստեղծել մեթոդական և կազմակերպական հիմք՝ ԳՊՀ-ի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար
- ✓ Խթանել ուսուցման որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացմանը ԳՊՀ-ում
- ✓ Նպաստել ԳՊՀ-ի առաքելության իրականացմանը՝ նրա սահմանած տեսլականին, ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Այդ նպատակների իրականացումից էլ բխում են ԳՊՀ որակի ներքին ապահովման հետևյալ **խնդիրները**.

- ✓ Ապահովել կրթական ծրագրերի պատշաճ մշակումը, հաստատումը, ընթացիկ մշտադիտարկումը, պարբերական վերանայումն ու շարունակական բարելավումը՝ որակի ապահովման սահմանված ընթացակարգերին համապատասխան
- ✓ Կրթական ծրագրերի որակի ներքին և արտաքին գնահատումն ու հավատարմագրումն իրականացնելու համար ստեղծել պայմաններ
- ✓ Որակի ապահովման համար ստեղծել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ
- ✓ Ապահովել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների մասնակցությունը

- ✓ Տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ
- ✓ Ուսանողների համար ստեղծել ուսումնառության պատշաճ հնարավորություններ՝ կրթական ծրագրերից ակնկալվող վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար
- ✓ Երաշխավորել որակի ներքին ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը ԳՊՀ տեսլականին և ռազմավարական նպատակներին:

***1.3 ԳՊՀ որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավման սկզբունքները***

ԳՊՀ-ն առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերում որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավմանը: Ուսանողների ներգրավումը որակի ապահովման և որակի ուժեղացման ոլորտում շարունակաբար եղել է ԵԲԿՏ-ի բոլոր բուհերի որակի զարգացման գործընթացների առանցքային բաղադրիչը:

Բուհի որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածությունը կարևորվել է ինչպես 2005թ. Եվրոպական չափորոշիչների և ուղենիշերի մշակման, այնպես էլ՝ 2015թ. դրանց վերանայման գործընթացներում: Համալսարանի ներսում ուսանողների ներգրավումը որակի գործընթացներում կարևոր է, քանի որ.

- ✓ ստեղծվում է մի հարթակ, որտեղ ուսանողները կարող են իրենց ներդրումն ունենալ կրթության կազմակերպման գործընթացներում,
- ✓ երաշխավորում է այն փաստը, որ ուսանողի կարծիքը հաշվի է առնվում բուհում կայացվող բոլոր որոշումներում,
- ✓ ուսանողները պարբերաբար իրականացվող հարցումների միջոցով կարողանում են տրամադրվող կրթական ծառայությունների վերաբերյալ իրենց գնահատականը տալ,
- ✓ հնարավորություն է տրվում ուսանողներին քննադատորեն մեկնաբանել բուհում իրականացվող ուսումնառության և դասավանդման գործընթացները,
- ✓ ստեղծվում է հաղորդակցության մի կարևոր օղակ, որով կապ է ապահովվում բուհի աշխատակազմի և ուսանողների միջև:

Ուսանողների ներգրավվածությունը կրթության որակի ապահովման գործընթացներին նպաստում է ուսանողների ուսումնառության վերջնարդյունքների ապահովմանը: Ուսանողները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու կրթության որակի ապահովման գործընթացներին՝ իրենց համար նախընտրելի և հասանելի ձևերով: ԳՊՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի գործունեությունն ուղղված է համալսարանում այնպիսի մշակույթի ձևավորմանը, որի շնորհիվ ստեղծված միջավայրում խրախուսվում է կրթության որակի ապահովման գործընթացներին ուսանողների

ներգրավումը: Ուսանողների և շրջանավարտների լիարժեք մասնակցությունը որակի ապահովման ներբուհական գործընթացներում որակի ապահովման համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է: Ուսանողները կարող են կրթության որակի ապահովման գործընթացներին մասնակցել հետևյալ եղանակներով.

- ✓ ընդգրկվելով համալսարանի կառավարման բոլոր օղակների աշխատանքներում,
- ✓ ակտիվորեն մասնակցելով պարբերաբար անցկացվող հարցումներին,
- ✓ աջակցելով հարցումների անցկացման գործընթացին,
- ✓ մասնակցելով կրթական ծրագրերի ուսումնական պլանի կազմմանը,
- ✓ մասնակցելով համալսարանի ինքնավերլուծության հաշվետվության մշակմանը,
- ✓ ընդգրկվելով որակի հսկման ներքին աուդիտի հանձնաժողովի կազմում,
- ✓ ընդգրկվելով ակադեմիական ազնվության, էթիկայի, բողոքարկման հանձնաժողովներում:

ԳՊՀ կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման կենտրոնը պարբերաբար անց է կացնում ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումների վերլուծության արդյունքում կազմվում են հաշվետվություններ, որոնք համապատասխան առաջարկություններով տրամադրվում են ամբիոններին, ֆակուլտետներին և բուհի ղեկավարությանը:

Ուսանողների բավարարվածությունը գնահատվում է հետևյալ հարցումների միջոցով.

- ✓ Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցումներ (Հավելված 1)
- ✓ Ուսանողների բավարարվածության հարցումներ ուսումնական և աշխատանքային միջավայրից (Հարցաշարը՝ հավելված 2)
- ✓ Առցանց ուսուցումից ուսանողների կարծիքի ուսումնասիրության հարցումներ (Հավելված 3)

ԳՊՀ-ն մշտապես խրախուսում է որակի բարելավման համար ուսանողների կողմից կարծիքների և առաջարկությունների ներկայացումը:

#### ***1.4 ԳՊՀ որակի ապահովման համակարգի փաստաթղթավորումը***

ԳՊՀ-ում որակի ներքին ապահովումը հենվում է հետևյալ փաստաթղթային բազայի վրա.

- ✓ ԳՊՀ Ռազմավարական ծրագիր
- ✓ ԳՊՀ որակի ապահովման ձեռնարկ
- ✓ ԳՊՀ-ում որակի ապահովման գործընթացները կարգավորող կարգեր, կանոնակարգեր և ընթացակարգեր,
- ✓ ԳՊՀ կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի միջնաժամկետ գործողությունների ռազմավարական ծրագիր



- ✓ ԳՊՀ կրթության որակի ներքին ապահովման համակարգի վերաբերյալ վերլուծական զեկույցները, հարցումների, քննարկումների և այլ միջոցառումների հաշվետվություններն ու արձանագրությունները, էլեկտրոնային տեղեկատվության աղբյուրները:

***1.5 ԳՊՀ որակի ապահովման հիմնական գործընթացները***

Որակի ներքին ապահովման հիմնական գործընթացներն են՝

**Սահմանված կրթական չափորոշիչների պահպանում.**

- ✓ Կրթական չափորոշիչները համապատասխանում են տվյալ ոլորտի որակավորման մակարդակին և սահմանվում են ԵԲԿՏ-ի որակավորումների շրջանակի և որակավորումների ազգային շրջանակի հիման վրա
- ✓ Կրթական չափորոշիչները բավարարում են համապատասխան պետական, մասնագիտական, օրենսդրական մարմինների և նմանատիպ այլ հաստատությունների պահանջներին

**Կրթական ծրագրերի որակի ապահովում.**

- ✓ Կրթական ծրագրերի պլանավորում
- ✓ Կրթական ծրագրերի մշակում և փաստաթղթային փաթեթի կազմում
- ✓ Կրթական ծրագրերի ներքին փորձաքննություն
- ✓ Կրթական ծրագրերի իրականացման վերահսկում
- ✓ Կրթական ծրագրերի գնահատում և պարբերական վերանայում

## Վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակում.

Կրթական ծրագրերի արդյունավետ նախագծման և մշակման համար կարևոր նշանակություն ունի կրթական ծրագրի նպատակների սահմանումը և կրթական վերջնարդյունքների ձևակերպումը: Այն երաշխիք է որակյալ կրթական ծառայությունների մատուցման և կրթության որակի շարունակական ապահովման համար: Կրթական ծրագրի վերջնարդյունքները նախապես սահմանված կրթական ձեռքբերումներ են, որոնք ընդհանուր կերպով ներկայացնում են, թե կրթական ծրագրի ավարտին ուսանողներն ինչ նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կունենան: Կրթական վերջնարդյունքները սահմանվում են ընդունելի նվազագույն մակարդակից, որոնք պետք է ապահովեն առավելագույն չափողականություն: Կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտելու դեպքում ուսանողները պետք է ձեռք բերեն կրթական ծրագրով սահմանված բոլոր կրթական վերջնարդյունքները: Կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված գործողությունների հիմքում ընկած է որակավորումների համաեվրոպական շրջանակը, որի հիման վրա մշակվել են Որակավորումների ազգային շրջանակները (ՈԱՇ), Որակավորումների համաեվրոպական շրջանակը: Որակավորումների ազգային շրջանակը սահմանում է կրթական հաստատությունների կողմից սեփական կրթական ծրագրերի վերանայում, ինչի արդյունքում հստակ կսահմանվեն առկա կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ինչպես նաև կվերանայվեն այդ կրթական ծրագրերի ներքո գործող

առարկայական ծրագրերի կրթական վերջնարդյունքները: Կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնական նպատակն ակնկալվող գիտելիքի ծավալի ու բովանդակության չափելիության ապահովումն է, որն այս մեթոդաբանությամբ թույլ է տալիս բացառել բոլոր վերացական և ոչ չափելի պահանջներն ու սահմանումները:

Ուսումնառության գործընթացում իմացության դրսևորումներն ըստ բարդության մակարդակների առաջին անգամ դասակարգել է ամերիկացի գիտնական Բենիամին Բլումը՝ 1956թ-ին: Իմացության ձևերի այդ հիերարխիկ դասակարգումն այնուհետև կոչվել է Բլումի տաքսոնոմիա (դասակարգում), որն ունի 6 մակարդակ, ըստ աճող բարդության՝ սկսած փաստերի պարզ հիշողությունից և վերարտադրությունից ստորին մակարդակում, մինչև վերլուծություն և գնահատում՝ բարձրագույն մակարդակում: Դասական տարբերակում Բ. Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական խումբը ներկայացնում է վեց մակարդակ՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ և գնահատում:

### **Ուսանողների գնահատում.**

Ուսանողների գնահատման նպատակն է ապահովել կրթական գործընթացների արդյունավետությունը, համակարգված և անընդհատ ստուգման միջոցով գնահատել ուսուցանվող դասընթացի կրթական մոդուլի ամբողջ ծավալի վերաբերյալ ուսանողի գիտելիքները, խթանել ուսանողների նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացները, ակադեմիական

առաջադիմությունը՝ հաշվի առնելով ուսումնառության բոլոր բաղադրիչները:

Իրականացվում է երկու տեսակի գնահատում՝ դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների գնահատում (ընթացիկ և եզրափակիչ քննություններ) և կրթական վերջնարդյունքների գնահատում (ավարտական ամփոփիչ ատեստավորում):

**Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում.**

Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովումը ենթադրում է ուսումնամեթոդական, մասնագիտական և ընդհանուր գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական զարգացում, ինչը ներառում է դասախոսների վերապատրաստում և կատարելագործում, դասախոսական պաշտոնների տեղակալման, նյութական խրախուսման գործընթացներ: Դասախոսական կազմի որակի ապահովման ուղղությամբ հատուկ ուշադրության կենտրոնում է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման հնգամյա ծրագիրը:

**Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատում.**

- ✓ Կրթական ծրագրի պահանջներին ուսումնառության ռեսուրսների որակական և քանակական բնութագրերի համապատասխանության գնահատում
- ✓ Պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի կրթական և անհատական կարիքների բացահայտում և գնահատում:

## ԳԼՈՒԽ 2

### ԳՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

#### *2.1 ԳՊՀ որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը*

Որակի ապահովման քաղաքականությունը ձևակերպում է ԳՊՀ մտադրությունները որակի ապահովման հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև դրանց իրականացման սկզբունքային ուղիները: Քաղաքականության իրականացման գործընթացը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկատվություն է ապահովում այն միջոցների վերաբերյալ, որոնցով իրականացվում է քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ կարգավորում և կոնկրետ գործողությունների է վերածում այդ միջոցները: ԳՊՀ զարգացման ընդհանուր ռազմավարության կարևոր կառուցամաս է որակի շարունակական բարելավումը, որը բխում է համալսարանի ռազմավարական ծրագրի համապատասխան խնդիրներից և ապահովում դրանց գործնական իրականացումը:

Որակի ապահովման քաղաքականությունը, նրա ընթացակարգային հենքը և որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը որակի ապահովման համակարգի կարևորագույն բաղադրատարրերն են:

ԳՊՀ որակի ապահովման քաղաքականության նպատակն է՝ բարձրացնել Համալսարանի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը: Այն ընդգրկում է համալսարանի գործունեության բոլոր հիմնական ասպարեզները՝ նպատակ ունենալով համապատասխանեցնելու դրանք Համալսարանի ռազմավարական նպատակներին:

ԳՊՀ որակի ապահովման ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորել և կոնկրետ գործողությունների վերաձել որակի ապահովման քաղաքականությունից բխող գործընթացները՝ ուղորդելով դրանց իրականացումն անհրաժեշտ ուղղությամբ:

## ***2.2 Ուսումնառության գնահատում***

Ուսանողների ուսումնառության գնահատումը բարձրագույն կրթության ամենակարևոր բաղադրիչներից է: Գնահատումը դասավանդողներին և ուսումնառության գործընթացում ներգրավված այլ շահառուներին արժեքավոր տեղեկատվություն է տրամադրում համալսարանում ուսուցման արդյունավետության և ուսումնառության գործընթացում ուսանողներին ցուցաբերվող աջակցության վերաբերյալ:

Ուսումնառության գնահատման չափանիշները, ձևերը և ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի և առաջադիմության բազմագործոնային գնահատման մեթոդաբանությունը սահմանվում են «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցով» և «ԳՊՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգով»:

Ուսանողի գիտելիքների գնահատման բազմագործոնային մոտեցումը կրեդիտային համակարգում խիստ կարևորվում է: Գնահատման այս համակարգի էությունն այն է, որ որոշակի դասընթացի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում, գնահատման գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները, գիտելիքների ստուգման միջանկյալ և ամփոփիչ փուլերը, գործնական, ինքնուրույն աշխատանքը, ընթացիկ ակտիվությունը: Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման համակարգի նպատակն է՝

- կազմակերպել ուսանողի ուսումնառության մոտիվացված և համաչափ աշխատանքային գործընթաց, բարելավել դասահաճախումների վիճակը,

- ստանալ անաչառ և ճշգրիտ տեղեկություն ուսանողի գիտելիքների և մասնագիտական պատրաստականության վերաբերյալ,

- ուսումնական գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր, նպաստել ուսանողի և դասախոսի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Գնահատման համակարգի կիրառումը հնարավորություն է ընձեռում՝

- ուսանողի գիտելիքների գնահատման ընթացքում հաշվի առնել ինչպես ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչները, այնպես էլ նրա ինքնուրույն ուսումնական աշխատանքի արդյունավետությունը,

- հեշտացնել մատուցվող նյութի յուրացումն ըստ բաժինների և բաղադրիչների, կազմակերպել արդյունավետ ուսումնական գործընթաց,

- ապահովել հիմնավորված ընթացակարգ՝ կրթական մեկ աստիճանից մյուսին անցելու համար և պարզեցնել անցման գործընթացը,

- ստեղծել ուսանողների ուսումնառությունը խրախուսող գործուն համակարգ (անվանական կրթաթոշակների նշանակում, գործուղումներ, ուսուցում մագիստրատուրայում, մրցանակների և դիպլոմների շնորհում, աշխատանքի նշանակում և այլն),

- ստեղծել տվյալների բազա՝ յուրաքանչյուր կրթական ծրագրի վերջնարդյունքների գնահատման համար:

ԳՊՀ-ում մասնագիտության ուսումնական պլանում ընդգրկված դասընթացներն ըստ գնահատման ձևի կազմում են 2 խումբ՝

- քննական

- ստուգարքային

Կիսամյակի ընթացքում քննական առարկայից, կուրսային նախագծից, կուրսային աշխատանքից, պրակտիկայից, ամփոփիչ ատեստավորման քննությունից, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունից ուսանողի հավաքած միավորների առավելագույն գումարը (չափորոշիչ ռեյթինգը) կազմում է 100 միավոր:

Առարկայի չափորոշիչ ռեյթինգը ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրիչների.

- դասընթացին ուսանողի մասնակցություն,



-լաբորատոր, գործնական և ստուգողական ու այլ աշխատանքների (առաջադրանքներ, ռեֆերատներ, սեմինարներ) կատարման և յուրացման ստուգում ու գնահատում,

- գիտելիքների յուրացում՝ ըստ միջանկյալ ստուգումների և ամփոփիչ քննությունների:

Ռեյթինգային միավորների համապատասխանեցումը գնահատման ավանդական և տառաթվային սանդղակներին կատարվում է համաձայն աղ. 2.1-ի:

Աղյուսակ 2.1

Գնահատակա նը	Ռեյտինգային միավորը	Թվանշա նը	Տառային նշանակումը
5 - Գերազանց	95-100	4.0	A+
	87-94	4,0	A
	81-86	3,7	A-
4 - Լավ	75-80	3,3	B+
	67-74	3,0	B
	61-66	2,7	B-
3 - Բավարար	55-60	2,3	C+
	46-54	2,0	C
	41-45	1,7	C-
2 - Անբավարար	≤ 40	0	D
Ստուգված	-	-	S
Չստուգված	-	-	U

Չափորոշիչ ռեյթինգները ձևավորվում են հետևյալ կերպ.

-տեսական դասընթացների համար՝ համաձայն 3.1 և 3.2 աղյուսակների

-ավարտական աշխատանքի /մագիստրոսական թեզի, կուրսային նախագծերի և կուրսային աշխատանքների համար՝ համաձայն 3.3, 3.4 և 3.5 աղյուսակների.

-պրակտիկաների համար՝ համաձայն աղ. 3.6-ի:

Աղյուսակ 3.1

N	Առարկայի ստուգողական բաղադրիչներ /Առկա ուսուցում/, բակալավր	Միավոր
1.	Կանոնավոր դասահաճախումներ	10
2.	Սեմինար և գործնական աշխատանքներին մասնակցությունը և կատարողականը	15*
3.	Ինքնուրույն աշխատանքների կատարում	15
4.	Ընթացիկ ստուգումներ	20+20
5.	Հանրագումարային ստուգում	20

\*Եթե առարկան ըստ ուսումնական պլանի չունի գործնական աշխատանք, ապա նրա համար նախատեսված 15 միավորը գումարվում է ինքնուրույն աշխատանքի 15 միավորին, այսինքն՝ մեծանում է ինքնուրույն աշխատանքի ծավալը:

Աղյուսակ 3.2

N	Առարկայի ստուգողական բաղադրիչներ	Միավոր
---	----------------------------------	--------

	/Հեռակա ուսուցում/, բակալավր	
1.	Կանոնավոր դասահաճախումներ	10
2.	Մեմինար և գործնական աշխատանքներին մասնակցությունը և կատարողականը	15*
3.	Ինքնուրույն աշխատանքների կատարում	25
4.	Հանրագումարային ստուգում	50

\*Եթե առարկան ըստ ուսումնական պլանի չունի գործնական աշխատանք, ապա նրա համար նախատեսված 15 միավորը գումարվում է ինքնուրույն աշխատանքի 25 միավորին, այսինքն՝ մեծանում է ինքնուրույն աշխատանքի ծավալը:

#### Աղյուսակ 3.3

N	Ավարտական աշխատանքի ստուգողական բաղադրիչները	Միավոր
1.	Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը	10
2.	Աշխատանքի կատարումը և արդյունքները	30
3.	Աշխատանքի շարադրումը և ձևավորումը	20
4.	Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը	40

#### Աղյուսակ 3.4

N	Մագիստրոսական թեզի ստուգողական բաղադրիչները	Միավոր
---	---	--------

1.	Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը	10
2.	Հետազոտության իրականացումը և արդյունքները	30
3.	Աշխատանքի շարադրումը և ձևավորումը	20
4.	Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը	40

Աղյուսակ 3.5

N	Կուրսային աշխատանքի(նախագծի) ստուգողական բաղադրիչները	Միավոր
1.	Որակի համար	20
2.	Կիսամյակային համաչափ աշխատանքի համար	20
3.	Պաշտպանություն	60

Աղյուսակ 3.6

N	Պրակտիկայի ստուգողական բաղադրիչները	Միավոր
1	Պրակտիկային կանոնավոր հաճախում	30
2	Գործնական առաջադրանքի կատարում	40
3	Հաշտվության ձևակերպում և հանձնում	30

15. Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության (դասահաճախումների) ռեյթինգը ձևավորվում է համաձայն աղ. 3.7-ի:

Մասնակցության աստիճանը %	Միավոր
81 - 100	10
51 - 80	5
<50	0

Ուսանողների գիտելիքների միջանկյալ ստուգումներն իրականացվում են կիսամյակի ընթացքում ըստ «Համակարգչային թեստավորմամբ ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգի», իսկ վերջնական գնահատումը՝ կիսամյակի վերջում հանրագումարային ստուգումների համար սահմանված ժամկետում: Միջանկյալ ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր կիսամյակի 8, 9 և 15, 16 շաբաթներում, թեստային համակարգով, համակարգիչների միջոցով, առանց ուսումնական պարապմունքների ընդհատման: Միջանկյալ քննությունների իրականացման ժամկետները ֆակուլտետի առաջարկությամբ հաստատվում է ուսումնական մասի կողմից: Միջանկյալ ստուգումներից անցողիկ շեմը (8 միավոր՝ մեկ միջանկյալ ստուգման համար) չհաղթահարած ուսանողն այն կարող է վերահանձնել տվյալ առարկայի հանրագումարային ստուգումից առաջ՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Ամփոփագրի ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված սյունակում լրացվում է «Ընդունված» կամ «Չընդունված» նշելով համապատասխան միավորը (ընդունվածի դեպքում՝ 15 միավոր,

իսկ չընդունվածի դեպքում՝ 0 միավոր): Ամփոփագրի ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված սյունակում լրացվում է «Ընդունված» կամ «Չընդունված»՝ նշելով համապատասխան միավորը (ընդունվածի դեպքում՝ 15 և/կամ 30 միավոր, եթե առարկան չունի գործնական, բակալավրի հեռակա ուսուցման և մագիստրատուրայի (առկա, հեռակա) համար՝ 25 և/կամ 40, եթե առարկան չունի գործնական):

Ինքնուրույն աշխատանքի անցողիկ շեմը չհաղթահարած ուսանողն այն կարող է վերահանձնել տվյալ առարկայի հանրագումարային ստուգումից առաջ՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Ստուգարքներից պարտք ունեցող ուսանողը, անկախ պարտքերի թվից, թույլատրվում է մասնակցելու քննություններին: Ստուգարքների վերահանձնումն իրականացվում է պարտքերի մարման շրջանում: Հեռակա ուսուցման համակարգում միջանկյալ ստուգումներ չեն իրականացվում: Ամփոփագրերի համապատասխան սյունակներում կիսամյակի վերջում դասախոսի կողմից գրանցվում են տվյալ դասընթացի լաբորատոր, գործնական և ստուգողական և այլ աշխատանքներից (առաջադրանքներ, ռեֆերատներ, սեմինարներ) հավաքած ռեյթինգային միավորները: Ամփոփիչ ստուգարքների և քննությունների իրականացման ձևը (որպես կանոն՝ բանավոր) և բովանդակությունը որոշում է առարկան սպասարկող ամբիոնը: Միջանկյալ ստուգումների և ամփոփիչ քննությունների տոմսերի բովանդակությունը, որպես կանոն, չի կրկնվում:

Ուսանողի գնահատման հանրագումարային միավորը (փաստացի ռեյթինգը) ստացվում է հաճախումների, գործնական (սեմինար) աշխատանքների, լաբորատոր աշխատանքների (եթե այդ առարկան ունի լաբորատոր պարապմունքներ), միջանկյալ երկու ստուգումների, ինքնուրույն աշխատանքի և ամփոփիչ քննության (ստուգարքի) փաստացի ռեյթինգների գումարից:

Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ N 1282-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»-ի: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը և գնահատումը կատարվում է ըստ «ԳՊՀ բակալավրի ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության կարգի»<sup>1</sup> և ըստ «ԳՊՀ մագիստրոսական աշխատանքի կատարման և պաշտպանության կարգի»:

ԳՊՀ-ում առկա և հեռակա կրթաձևերում դասընթացները կազմակերպվում են նաև հիբրիդային եղանակով /առկա և

---

<sup>1</sup> Համավարակի պայմաններից ելնելով այս կարգերում ևս 2020 ուստարվա համար գործել է այլ անցումային ընթացակարգ, մասնավորապես ավարտական և մագիստրոսական աշխատանքների հեռավար պաշտպանության կազմակերպման առումով:

հեռավար/։ Նման եղանակով դասերի անցկացման համար բացի COVID 19-մարտահրավերից, հաշվի է առնվել նաև ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մոտ առցանց ուսուցման վերաբերյալ իրականացված հարցումների արդյունքները։ Հիբրիդային եղանակը հնարավորություն է տալիս նաև հրավիրել շատ մասնագետների, ինչն էապես նպաստում է կրթության որակի բարձրացմանը։

***2.3 ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումը,  
խրախուսումը, վերապատրաստման և որակավորման  
բարձրացումը***

ԳՊՀ գործունեության գնահատման գործիքներից մեկը պրոֆեսորադասախոսական անձնակազմի (ՊԴ) ընտրության և գործունեության գնահատումն է, որն իրականացվում է համաձայն «ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման և պաշտոնների տեղակալման» կանոնակարգի։

ԳՊՀ-ում սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի հետևյալ պաշտոնները՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս, որոնց տարիքային սահմանները կարգավորվում են ըստ ՀՀ աշխատանքային օրենսդրության։ ՊԴ կազմի պաշտոնների տեղակալման չափանիշները է բարձրագույն կամ հետբուհական մասնագիտական կրթության որակավորումը, գիտական աստիճանը, գիտական կոչումը։

ԳՊՀ-ում **պրոֆեսորի** պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտամանկավարժական և կազմակերպչական հետևյալ ձևերը.



-դասախոսությունների վարում բակալավրում և մագիստրատուրայում. խորհրդատվությունների, սեմինարների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացում,

-ղեկավարում է ասպիրանտներ և հայցորդներ,

-կազմակերպում է գիտաժողովներ, գիտական սեմինարներ, վերապատրաստումներ,

-մշակում է ուսումնամեթոդական նյութեր,

-ներդնում է դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաներ,

-մշակում է առաջարկություններ ամբիոնի գիտական և հետազոտական աշխատանքների բարելավման համար

-ղեկավարում է մագիստրոսների թեզեր, ավարտական և կուրսային աշխատանքներ,

-աջակցում է ուսանողական գիտական ընկերությանը

-իրականացնում է երիտասարդ դասախոսների մասնագիտական խորհրդատվություն,

-մասնակցում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքներին,

-ուսանողների հետ իրականացնում է անհատական և ինքնուրույն աշխատանքներ,

-իրականացնում է ամբիոնի օրինակելի կանոնակարգից բխող այլ գործառույթներ:

### **Դոցենտը՝**

-վարում է դասախոսություններ բակալավրում և մագիստրատուրայում, անց է կացնում խորհրդատվություններ, սեմինարներ, գործնական և լաբորատոր պարապմունքներ

-ղեկավարում է բակալավրի ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր, կուրսային աշխատանքներ, համագործակցում է բուհի այլ ստորաբաժանումների և մասնագետների հետ, ապահովում համատեղ ծրագրերի իրականացում,

-մշակում է ուսումնամեթոդական փաթեթներ,

-իրականացնում է ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեություն,

